ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ձորագետ համայնք, հասցե հ. Ձորագետ 1փ. 41, հեռախոս 093-33-88-09
էլ. փոստ dzoraget.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«25 » Փետրվարի 2020 թվականի N 15-Ա

«Վ.Ն.Ս. ԵՌՅԱԿ» ՍՊԸ-ԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԵՂՈՒԿ ՎԱՌԵԼԻՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, համաձայն Ձորագետ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 34 -Ն որոշման հավելվածի 1-ին կետի 4-րդ ենթակետի, հիմք ընդունելով «Վ.Ն.Ս. Եռյակ» ՍՊԸ-ի 2020 թվականի փետրվարի 24-ի հայտը՝

Որոշում եմ.

1. «Վ.Ն.Ս. ԵՌՅԱԿ» ՍՊԸ-ին /ՀՎՀՀ 0692395/տալ Ձորագետ համայնքի 1 փողոց թիվ 1 հասցեում գտնվող հեղուկ վառելիքի լցման կայանում հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվություն:
2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետին՝ եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:
3..Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2020 թ. փետրվարի 25

հ. Ձորագետ